Ուսուցման ծրագիր

«ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր» և «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր» թեմաներով իրավաբանի մասնագիտությամբ որակավորման ստուգումներին և մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց նախապատրաստական դասընթացների

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է «ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր» և «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր» թեմաներով նախապատրաստական դասընթացներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, դասավանդվող առարկայական կուրսերի արժեքները:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ մասի, 19-րդ հոդվածի, Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի 22.12.2021 թվականի թիվ ԿԽ-010/21/3 որոշմամբ հաստատված ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման» կարգի, ինչպես նաև Ունկնդիրների համապատասխան մասնագիտական կարիքների բավարարման հաշվառմամբ:
3. Ծրագրի նպատակն է Ունկնդիրների շրջանում՝ արդարադատության իրականացմանը նպաստող մասնագիտական հմտությունների ձևավորումը, ինչպես նաև Ունկնդիրների գիտելիքների և աշխատանքային ունակությունների զարգացումը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման եղանակով՝ առավելագույնը 10 Ունկնդրից բաղկացած խմբերով:
5. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը Ունկնդիրների համար սահմանվում է 3 ամիս և կազմում 110 ակադեմիական ժամ:
6. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 2023 թվականի հուլիսի 6-ից 2023 թվականի հոկտեմբերի 6-ը ներառյալ:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

№	Անվանում	Արժեք
1.	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քաղաքացիական գործերով	450.000 ՀՀ դրամ
2.	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քաղաքացիական գործերով	450.000 ՀՀ դրամ